

ՎԱՍԱԿ ՍՅՈՒՆԻՆ ԵՎ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ» ԸՍՏ ԵՂԻՇԵԻ. ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԼԱՐԿ

Հոդվածը վերաբերում է Վասակ Սյունու գործունեության մի դրվագին եւ դրա հետ կապված երաժշտական կարգեր կապակցության քննությանը: Այս կապակցությունն արդի հայերենով այնքան էլ միանշանակ չի ընկալվում: Ընդունելով Մ. Աբեղյանի մեկնությունը՝ կփորձենք առավել նեղ մասնագիտացված նրբերանգով դիտարկել «երաժշտական կարգեր»-ը: Սա որոշակիորեն կօգտի հասկանալու նաեւ երաժիշտ անհայտ ծագման բառին առնչվող ստուգաբանական եւ իմաստաբանական կնիքները:

Բանալի բառեր¹ երաժիշտ, երաժշտական կարգ, հեթանոսական երգ, Եղիշէ, Վասակ Սիւնի, ձեռագրեր:

Աղբյուրը

Հայ ինքնուրույն գրականության մեջ երաժիշտ արմատն առաջին անգամ հանդիպում է 5-րդ դարի պատմագիր Եղիշէի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկում կապված Վասակ Սյունու գործունեության հետ: Խնդրո առարկա դրվագը փորձել ենք ուսումնասիրել բոլոր ձեռագրական տարբերակներն ի նկատի ունենալով, թեեւ, ինչպես նշում է սույն երկի մանրակրկիտ հետազոտող Ե. Տեր-Մինասյանը, տարբերակայնությունն այնքան աննշան է առանձին ձեռագրերի միջեւ, որ նույնիսկ դժվար է խմբերի բաժանել դրանք: Այս առումով Եղիշէի գրվածքն առանձնանում է վաղմիջնադարյան մյուս մեր մատենագիրների երկերից. ընդօրինակումների ընթացքում այն, ըստ էության, «կանոնական բնույթ» է ստացել²: Հայտնի են մոտ 30 ձեռագրեր, որոնք բոլորն էլ գրված են թղթի վրա³:

Թեեւ Եղիշէն գրում է, որ ականատես է եղել իր նկարագրած պատմական անցքերին, այսուհանդերձ նրա պատմագրական ոճն ու եղանակը կարելի է համարել կրոնավիպական: Ի տարբերություն, օրինակ, Նույն իրադարձությունների մասին պատմող Ղազար Փարպեցու, Եղիշէն կարծես «կը գրէ պատմութիւն մը, որ պարզապէս դիւցազներգական բան մ'ունի»⁴, եւ կամ «պատմությունն իրեն նյութ վերցրած մի բանաստեղծական քերթված՝ ո՛չ թե սոսկ պատմաբանի, այլ հոգով բանաստեղծի գործ»⁵: Արդեն երկի կառուցվածքն իսկ, որն ընդգրկում է 7 յեղանակներ (գլուխներ), մի տեսակ սուրբգրային գաղափարախոսական երանգ է հաղորդում աշխատանքին: Ճիշտ է, գլուխների տրոհման որոշակի խառնաշփոթ կա տարբեր ձեռագրերի միջեւ, ինչը հավանաբար տեղի է ունեցել 10-րդ դարից հետո եւ 12-րդ դարից առաջ: Ամեն դեպքում, ի սկզբանե յոթ յեղանակների գոյությունը չի վիճարկվում⁵:

Եղիշէի կրոնավիպական պատմության ամենահին ստույգ ձեռագիրը

1 Եղիշէ 1957, V:

2 Եղիշէ 1957, XIX-LI:

3 **Կիլիսերեան** 1909, 196, 212, 222, ծան. 1:

4 Եղիշէ 1946, 14:

5 Մանրամասները տե՛ս **Կիլիսերեան** 1909, 32-33, 108-118; Եղիշէ 1957, VI-VII:

թվագրվում է 12-րդ դարով (1174 թ.)՝ ընդօրինակված Կոչավանքում¹: Գոյութուն է ունեցել մեկ այլ՝ ավելի հին ձեռագիր էլ (1130 թ.), որը 20-րդ դարասկզբին պահվում էր Բաղեշի Ամրոդ(ու) վանքում, իսկ ներկայում այդ ձեռագրի գտնվելու վայրը հայտնի չէ²: Սրանցից բացի, 19-րդ դ. կեսերին (1861 թ.) Թեոդոսիայում հրատարակված օրինակի Ներածության մեջ հիշատակվում է նաև ինչ-որ «Անձեւացեաց» ձեռագրի մասին, որը խմբագիրը՝ Խորեն վ. Գալֆայեանը (Նար Պէյ), տեսել էր Փարիզում ոմն Սըր Չառուայթի մոտ: Դատելով մագաղաթի վրա արված երկաթագիր տառերից՝ Գալֆայեանն այդ ձեռագիրը թվագրում է առավազն 7-8-րդ դարերով, իսկ լուսանցքային նշումներն, ըստ նրա, հասնում էին մինչև 9-րդ դ.³: Դժբախտաբար այժմ այս ձեռագրի գտնվելու վայրն անհայտ է, բայց, ամեն դեպքում, Թեոդոսիայի հրատարակությունը հիմնված է դրա վրա:

Սուտ մեկ դար անց՝ Ե. Տեր-Մինասյանը, հիմնվելով Թեոդոսիայի հրատարակության, ինչպես նաև Երեւանի Մատենադարանում պահվող 17 ձեռագրերի եւ բնագրային արժեք ունեցող զանազան հրատարակությունների վրա, լույս ընծայեց Եղիշեի երկի քննական բնագիրը⁴, որն ամենաամբողջականն է մնում մինչև այսօր:

Պատմական համապատկերն ըստ Եղիշեի

«Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի Երկրորդ յեղանակում Եղիշեն մանրամասնորեն նկարագրում է հայ նախարարների ուրացությունը Պարսից մայրաքաղաք Տիգրնում: Այնուհետև Երրորդ յեղանակի հենց սկզբում նա ակնարկում է, որ ինքն էլ ներկա էր այդ դեպքերին⁵: Եղիշե-ականատեսի խոսքերով՝ հայոց զորքի մեջ եղած քահանաները, իրենց սրտնեղությունը չզսպելով, անջատվեցին նախարարներից եւ շտապ Պարսից երկրից ձիով սուրհանդակ ուղարկեցին Հայոց աշխարհը: Սա տեղ հասնելով՝ ուրացության գույժը հայտնեց եպիսկոպոսաց ժողովին, որոնք էլ ցրվելով ամեն մեկն իր իշխանությունը՝ քորեպիսկոպոսների միջոցով ոտքի հանեցին եւ զինեցին ողջ ժողովրդին⁶:

Ապա նույն զլխում (յեղանակում) Եղիշեն պատմում է հայ նախարարների զորագնդի՝ Հայաստան վերադառնալու եւ Այրարատ նահանգի Անգղ մեծ

1 Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ - Մատենադարան № 1890 (1687), տե՛ս Եղիշե 1957, XIX. այս ձեռագիրը Եղեշեի երկի սույն քննական բնագրի մեջ նշանակված է Ա տառով:

2 Այս մասին Բաբգեն վարդապետ Կիլիսեւերեանը գրում էր, որ Տյուք լեռնային գավառի (Այնթապից հյուսիս) մասին գրավոր հիշատակարաններ փնտրելու ընթացքում «աւելի թանկագին եւ փարելի յիշատակարան մըն ալ ես գտայ Բաղէշ, Ամրսոյու վանքի ձեռագիրներու մէջ (1900 Մայիս), ընտիր բայց դժբախտաբար մկնակեր ձեռագրի մը՝ Եղիշէի մէջ: Եղիշէի օրինակ մը, որուն գոյութեան վստահ էի, Ամրսոյի մատենադարանին մէջ, ձեռքով դրածի պէս փնտռեցի. գտնելս բախտ մ'էր ինձ համար...» [Կիլիսեւերեան 1904, 48]: Իր ավելի ուշ աշխատանքում, որը նվիրված է Եղիշեի քննական ուսումնասիրությանը, Կիլիսեւերեանը Ամրսոյի նույն ձեռագրի մասին գրում էր, որ «ՇՈՎՔը գրելու ատեն այդ ձեռագրին յիշատակարանը միայն ունէի. ետքը ընդօրինակութիւն մըն ալ ձեռք բերի, որ դժբախտաբար շատ խսակ օրինակ մը եղաւ, զուրկ բանասիրական ճշդութենէ»: Խնդիրը նաև այն էր, որ նշված «ձեռագիրը այնքան գէշ կրծուած է [մկներից - Տ.Դ.], որ իւրաքանչիւր երեսի իւրաքանչիւր տողէն հազիւ մէկ երկու բառ փրկուած է» [Կիլիսեւերեան 1909, ժԹ-Ի]:

3 Եղիշե 1861, Գ-Դ; Կիլիսեւերեան 1909, 41-44; Տեր-Մինասյան 1943, 95-96:

4 Եղիշե 1957:

5 Եղիշե 1946, 139, 291, ծան. 82; գրաբար բնագիրը տե՛ս Եղիշե 1957, 54:

6 Եղիշե 1957, 57:

գյուղաքաղաքում բանակելու մասին՝ բոլոր օգնականներով եւ պարսից գրադաշտական մոզերի բազմութեամբ («Իսկ գունդն Հայոց ամենայն օգնականօքն հանդերձ եւ մոզացն բազմութեամբ... եկին հասին յաշխարհն Հայոց...»¹): Եվ երբ վերադարձից 25 օր անց՝ մի կիրակի օր, պարսից մոզպետը մոզերի հետ միասին փորձում էր քանդել եկեղեցու դռները, Ղեւոնդ երեցն ու իր զինակիցները դազանակներով «մոզերի ու մոզպետի գլուխը ջարդեցին...» («Քանզի վիրգս ի ձեռն առեալ՝ զկառափունս մոզացն եւ մոզպետին ջարդեցին...»): Այս միջադեպն իսկույն պատճառ է դառնում ժողովրդական բազմամբոխ ընդվզման ու խռովութեան²:

Դրանից հետո Պարսից մոզպետը ետ է կանգնում իր մտադրութեանից եւ առաջարկում, որ ինքը նամակ գրի «մոզպետաց մոզպետին» եւ Պարսից արքունիքի պաշտոնյաներին՝ հայոց քրիստոնեական հավատին չդիպչելու հորդորով: Սակայն Վասակը խորհուրդ է տալիս համբերել եւ անմիջապէս Սյունիքից հավաքած զինվորներով համալրում է իր զորագունդը՝ մոզպետին ու մոզերին օգնութեան հասնելու համար: Մոզպետը դարձյալ փորձում է համոզել Վասակին, որ նա մարդկանց բռնութեամբ կրոնափոխ չանի, այլապէս երկիրը կավերվի եւ կամայանա, իսկ դա վնաս կլինի պարսից արքունիքին: Սակայն Վասակը նրան չի լսում, քանի որ սրտանց էր ընդունել պարսից կրոնը («Եւ ոչ ինչ կամեցաւ ամենեւին ունկն դնել նմա մարզպանն, զի սրտի մտօք կալեալ էր զպարսկական օրէնսն»)³:

Հնարավոր է, որ Վասակը ոչ թէ պարզապէս ընդունել էր «պարսկական կրոն»ը, ինչպէս դա ներկայացնում է քրիստոնյա վարդապետ Եղիշեն, այլ փոքրուց ապրել էր այնպիսի միջավայրում, ուր քրիստոնեական կրոնին զուգահեռ շարունակում էին գոյատեւել տեղի հնավանդ հեթանոսական հավատալիքները: Սյունիքում մնացած հեթանոսների մասին տեղեկություններ կան Կորյունի եւ Ստեփանոս Օրբելյանի երկերում: Այսուհանդերձ, մոտ մեկուկէս դարի ընթացքում Սյունյաց նահանգը մեծապէս քրիստոնեական շունչ ու ոգի էր ստացել, եւ դրա դեմ պայքարելու համար էր Վասակը փորձում զանազան միջոցներով ստվարացնել իր համախոհների թիվը: Այդ միջոցների թվում հիշատակվում են հետեւյալները. խաբել գույքով, հորդորանքներով, իսկ հասարակ ժողովրդին՝ սպառնալիքով:

Պատմագրական դրվագը

Նույն պարբերության մեջ, ուր Եղիշեն գրում է, թէ Վասակը սրտանց էր «պարսկական օրէնքների» հետեւորդ դարձել, ապա նա շարունակում է. «Սկսաւ այնուհետեւ պատրել զոմանս կարասեաւ եւ զոմանս ողորջական բանիք. զռամիկն ամենայն՝ ահեղ բանիք սպառնացեալ սրտաթափ առնէր: Հանապազորդ առատացոյց զռոճիկսն տաճարին, եւ յերկարէր զնուազսն ուրախութեան, մաշելով զերկայնութիւն զիշերացն յերգս արբեցութեան եւ ի կաքաւս լկտութեան, քաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժշտական եւ զերգս հեթանոսականս մեծապէս գովութիւն մատուցանէր օրինաց թագաւորին: Բերեալ էր եւ յարքունուստ բազմութիւն կարասւոյ, եւ միում միում կաշառ գաղտ խթեր ի

1 Եղիշէ 1957, 58:

2 Եղիշէ 1946, 142; Եղիշէ 1957, 58:

3 Եղիշէ 1946, 143:

պատճառն պարզելի եւ պատուոյ. եւ բազում նենգութեամբ զանմեղ մարդիկ հրապուրէր եւ յինքն արկանէր»¹ (ընդգծումը՝ Տ.Գ.):

Ինչպէս տեսնում ենք, Վասակը շատացնում է սեղանատան (այստեղ՝ «տաճար») մթերքը եւ խնջույքները՝ «գիշերների երկարատեւությունը մաշելով արբեցութեան երգերով ու լկտի պարերով. ոմանց համար սիրելի էր դարձնում «երաժշտական կարգերն» ու հեթանոսական երգերը, մեծամեծ զովեստներ էր տալիս [Պարսից] թագաւորի կրօնին»: Վասակը [Պարսից] արքունիքից շատ դրամ էր բերել, որով կաշառում էր իշխանաւորներին եւ իր կողմը քաշում «սրա-նրա գրպանը գաղտնի կաշառք էր խոթում՝ իբր թէ պարզել ու պատիվ է տալիս. եւ մեծ նենգութեամբ անմեղ մարդկանց հրապուրում էր իր կողմը»²: Վ. Հացունու կարծիքով՝ այս խնջույքների արբեցութեան երգերը կարող էին լինել սիրային, վիպական եւ ներբողական բովանդակության³:

Մեզ հետաքրքրող «զկարգս երաժշտական եւ զերգս հեթանոսականս» մասը զանազան ձեռագրերում տարբեր ձեւով է ներկայացված: Այսպէս, ամենահին պահպանված ձեռագրում (Ա, տե՛ս ծան. 6) «երաժշտական» բառը բացակայում է, սակայն այստեղ բացակայում է նաեւ «զերգս» բառը, ուստի ամբողջ նախադասությունն ունի հետեւյալ տեսքը՝ «քաղցրացուցանէր ոմանց զկարգս հեթանոսականս. մեծապէս գոհութիւն մատուցանէր օրինաց թագաւորին»: Նախադասության առաջին մասի նույն տեսքն առկա է նաեւ Երեւանի Մատենադարանում պահվող Գ (1310 թ., Վան), Զ (15-16-րդ դդ.), Է (1619 թ.), Թ (1664 թ., Հովհաննավանք), Ի (1675 թ., Նոր Զուղա), Կ (17-րդ դ.) եւ Վենետիկի Մխիթարյանների գրադարանում պահվող Վ (1660 թ.) ձեռագրերում:

Մի ձեռագիր կա, որում ընդհանրապէս ամբողջ՝ «երաժշտական եւ զերգս հեթանոսականս» մասն է բացակայում, հետեւաբար նախադասությունն ունի հետեւյալ տեսքը՝ «քաղցրացուցանէր ոմանց զկարգս մեծապէս գոհութիւն մատուցանէր օրինաց թագաւորին»: Այս ձեռագիրը՝ Բ (1207 թ.), պահվում է Երեւանի Մատենադարանում: Նույն տեղում պահվող Դ (14-րդ դ.?) ձեռագրում էլ «հեթանոսականս» բառը փոխարինված է «հեթանոսաց» ձեւով, ուստի խնդրո առարկա նախադասությունն այսպիսի տեսք ունի՝ «քաղցրացուցանէր ոմանց զկարգս հեթանոսաց. մեծապէս զովութիւն մատուցանէր օրինաց թագաւորին»:

Փաստորեն, նախադասությունն ամբողջական ձեւով առկա է միայն Երեւանի Մատենադարանում պահվող Ե (1569-1570 թթ., Բաղէշ), Ը (1641 թ., Նոր Զուղա), Ժ (1672 թ., Ամրդոլու վանք), Լ (1678 թ., Ալիփուղար), Խ (1689 թ.), Ծ (1698 թ.⁴), Զ (1705 թ., Էջմիածին) ձեռագրերում, ինչպէս նաեւ Անձեւացեաց օրինակում [տե՛ս Եղիշէ 1861, 95]⁵:

Երաժշտական կարգեր

Ինչպէս տեսնում ենք, բազմաթիվ ձեռագրերում «երաժշտական կարգեր» կապակցությունը զեղչվել կամ կրճատվել է: Ակներեւ է, որ հնագույն եւ ամբողջ-

1 Եղիշէ 1957, III, 63-64; Եղիշէ 1989, III, 126, 128-129:

2 Եղիշէ 1946, 146-147; Եղիշէ 1958, 60:

3 Հացունի 1912, 205-206:

4 Ե. Տեր-Մինասյանի մոտ նշված է՝ 1668 թ. [Եղիշէ 1957, XL]:

5 Ձեռագրային տարբերությունները եւ ձեռագրերի մասին տեղեկությունները՝ ըստ Եղիշէ 1957, XIX-LI, 64, ինչպէս նաեւ Ե. Տեր-Մինասյանի այս աշխատասիրությունը վերահրատարակված՝ Մատենագիրք հայոց 2003, 517-520, 592:

ջական օրինակը «քաղցրացուցաներ ոմանց զկարգս երաժշտական եւ գերգս հեթանոսականս. մեծապէս գովութիւն մատուցաներ օրինաց թագաւորին» տարբերակն է, քանի որ երաժշտական բառը չէր կարող հենց այնպէս ավելացվել ավելի ուշ ձեռագրերում, մանավանդ որ տեքստի մեջ էլ երաժիշտների մասին որեւէ այլ խոսք չկա, որ հիմք տար գրիչներին հավելում կատարելու: Հետեւաբար, զոնե այս նախադասության օրինակի վրա պետք է ընդունենք, որ «Անձեւացեաց» ձեռագիրն իսկապէս հնագույնն ու ամենաամբողջականն է եղիշեի ձեռագրերի մեջ:

Ակնհայտ է, որ բերված նախադասության մեջ «երաժշտական կարգեր» եւ «հեթանոսական երգեր» կակապցությունները գործածված են որպէս հոմանիշ հասկացություններ: Վասակը մեծապէս գովություն էր մատուցում [Պարսից] թագավորի կրոնքին («օրինաց թագաւորին»)՝ մարդկանց սիրելի դարձնելով («քաղցրացուցաներ ոմանց») երաժշտական կարգերն ու հեթանոսական երգերը: Այսինքն՝ այս երկու հասկացություններն ընկալվում էին իբրեւ պարսից կրոնին տուրք տալու երկու միջոցներ կամ առնվազն նախաքրիստոնեական հայոց կրոնի բնորոշ հատկանիշներ: «Հեթանոսական երգեր» կապակցությունը միանգամայն հասկանալի է եւ լրացուցիչ բացատրության կարիք չունի, մինչդեռ «երաժշտական կարգեր»-ն, ըստ երեւոյթին, հարկ է հասկանալ հատուկ մասնագիտացված երաժիշտների կողմից կատարվող մեղեդիները, որոնք քրիստոնեության կողմից մերժվում եւ չէին ընդունվում:

Մ. Աբեղյանն այստեղ կարգ բառը բացատրում է «խումբ» իմաստով եւ երաժշտական կարգ կապակցությունը մեկնաբանում որպէս «նվագախումբ»¹: Եթէ այս մեկնությունը ճիշտ է, ապա կարելի է ենթադրել, որ հեթանոսական երգերը կատարվում էին նվագախմբերի ձայնակցությամբ, թեպէտեւ Եղիշեի վերոնշյալ հատվածից հնարավոր է հասկանալ նաեւ, թէ «երաժշտական կարգերը» եւ «հեթանոսական երգերը» իրարից անկախ էին կատարվում: Ինչէւէ, Վասակի իշխանական ապարանքում, միասնաբար կամ միմյանցից զատ-զատ, կատարվում էին երաժշտական կարգեր եւ հեթանոսական երգեր, ընդ որում երաժշտական կարգերի կատարողները պետք է լինեին հատուկ մասնագիտացված նվագածու-երաժիշտները, իսկ հեթանոսական երգերը բնականաբար պետք է երգվեին երգիչների կողմից:

Այսպիսով, Եղիշեի բերված հատվածում տեսնում ենք, որ երաժիշտ բառից ածանցված երաժշտական ածականն, ըստ էության, ոչ-քրիստոնեական եզրաբանության մաս է կազմում: Թերեւս, ավելի ընդհանուր իմաստով 5-րդ դարում պետք է գործածվեին երգ («երաժշտություն» իմաստով) եւ երգիչ («երաժիշտ» իմաստով) բառերը: Մինչդեռ երաժիշտ եւ երաժշտական կարգ բառերը պետք է որ նեղ նրբերանգային իմաստներ ունենային եւ առնչվեին նախաքրիստոնեական կրոնին: Սրա պացույցն է եւ այն, որ Ա ձեռագրում գրիչը կրճատել է ինդրո առարկա հատվածը՝ թողնելով միայն «քաղցրացուցաներ ոմանց զկարգս հեթանոսականս»: Ստացվում է, որ Վասակը պարզապէս մարդկանց համար սիրելի էր դարձնում հեթանոսական կարգերը (այն է՝ սովորույթները), ինչն էլ արտահայտվում էր երաժշտական կարգերի եւ հեթանոսական երգերի միջոցով: Ուրեմն, եթէ մի կողմ դնենք Բ ձեռագրի ակնհայտորեն պակասավոր միտքը («քաղցրացուցաներ ոմանց զկարգս մեծապէս գովութիւն մատուցաներ

1 Աբեղյան 1967, 195:

օրինաց թագաւորին»), ապա մյուս բոլոր ձեռագրերում ունենք երկու հիմնական տարբերակ.

ա) ամբողջական միտքը պարունակող տարբերակը, ուր նշվում են հեթանոսական կարգերը սիրելի դարձնելու միջոցները՝ երաժշտական կարգերն ու հեթանոսական երգերը (Անձեւացեաց եւ ավելի ուշ՝ 16-18-րդ դարերի ձեռագրեր՝ Ե, Ը, Ժ, Լ, Խ, Ծ, Հ),

բ) կրճատված միտքը պարունակող տարբերակը, որը հաղորդում է ընդհանուր իմաստը՝ «քաղցրացուցաներ ոմանց զկարգս հեթանոսականս...» (Ա ձեռագիր) եւ կամ «քաղցրացուցաներ ոմանց զկարգս հեթանոսաց...» (Դ ձեռագիր): Ա ձեռագրին են հետեւում 14-17-րդ դարերի այլ ձեռագրեր՝ Գ, Զ, Է, Թ, Ի, Կ եւ Վ:

Այն որ, կրճատումը տեղի է ունեցել բավական հին ձեռագրերում (12-րդ դ. եւ 14-րդ դ.), ցույց է տալիս, որ գրիչներն այդ ժամանակ դեռեւս հասկացել են երաժշտական կարգեր կապակցության հին կրոնական իմաստը, բայց միեւնոյն ժամանակ իրենց ժամանակակից լեզվում արդեն երաժիշտ եւ երաժշտութիւն բառերի նշանակութիւնները համընդհանուր իմաստ էին ստացել, ուստի եւ նրանք անհրաժեշտութիւն են զգացել Եղիշեի ձեւակերպումը փոխելու եւ առավել կրճատված ընդհանրական համարժեք գործածելու՝ հեթանոսական կարգեր կամ հեթանոսների կարգեր:

Երաժիշտ բառի ծագումը

Հայ. երաժիշտ բառի ստուգաբանութիւնն աղոտ է: Հ. Աճառյանն իր վաղ շրջանի հոդվածներից մեկում երաժիշտ բառի մեջ առանձնացնում էր -իշտ վերջածանցը՝ *երաժ-ը համարելով արմատ: Նույն վերջածանցով ձեւավորված բառ էր նա համարում նաժիշտ «աղախին» կազմութիւնը, որի արմատը դիտարկում էր որպէս իրանական կորսված մի ձեւ՝ ավեստերէն կամ միջին պարսկերէն *nag- «ծառայել, աղախնութիւն անել», իսկ -իշտ վերջածանցին վերագրում էր բայանվան կազմիչի նշանակութիւն՝ համարժեք -իչ, -ող վերջածանցներին¹: *երաժ- արմատն, ըստ Հ. Աճառյանի, կապված է երգ բառի հետ՝ գ > ժ հնչյունափոխությամբ, ինչպէս որ *նաժ- արմատը՝ *nag-ի հետ:

Այս հնչյունական անցման կապակցությամբ Աճառյանը գրում էր, որ «հարկաւոր է յիշել գ (g) եւ ժ (ž) ձայներուն փոփոխութեան օրէնքը: Այս օրէնքը ընդհանուր ձայնախօսութեան մեջ այնպէս ծանօթ բան մըն է, որ բաւական է միայն յիշել մի քանի օրինակներ. այսպէս ֆրանս. *jardin, général* եւ գերմ. *garten, general*, լատ. *magister* եւ ֆրանս. *magistre, յն. magistros*՝ որ կը հնչուի հին յն. մագիստրոս, միջին յն. մաժիստրոս (ասկէ հայ. մաժիստոռոս - Ասողիկ, Լաստիվերտցի) եւ նոր յն. մայիստրոս եւն եւն»²: Հայերէնում նույնպէս Աճառյանը բերում է գ > ժ հնչյունափոխության հետաքրքրական օրինակներ, ինչպէս՝ տուժել եւ տուգանք, աւզնել եւ աւժանդակ, յարգել եւ արժել, ոյգ (առ-ոյգ) եւ ոյժ: Հատկանշական է, որ նշված ձեւերն իրական կամ վերականգնվող զուգահեռներ ունեն իրանական լեզուներում: Այսուհանդերձ, Հ. Աճառյանը ոչ մի կերպ չի բացատրում *երաժ- արմատի մեջ ա ձայնավորի առաջացումը, եթե բառն իսկապէս կապված է երգ արմատին:

Այս պատճառով էլ հետագայում Հայերէն արմատական բառարանում, Հ.

¹ Աճառյան 1899, 252:

² Աճառյան 1899, 251-252:

Աճառյանը չի ընդունում իր մեկնությունը¹: Մյուս լեզվաբաններն էլ ոչինչ չեն ավելացնում բառի ստուգաբանությանը: Գ. Ջահուկյանը երաժիշտ բառը համարում է «փոխառություն իրանական աղբյուրից», բայց, միեւնույն ժամանակ, նշում, որ «բուն աղբյուրը չի հավաստված»²:

Հայ. երաժիշտ բառի գործածությունը գրաբարում շատ հաճախական չի եղել, ինչպես նաեւ մեծաթիվ չէին այդ արմատով կազմությունները: Սա կրկին ցուցում է այն հանգամանքի վրա, որ բառը սահմանափակ իմաստաբանական եւ տարածքային գործածություն է ունեցել, ինչը բնորոշ է հատկապես փոխառյալ բառերերին: Աստվածաշնչում երաժիշտ եւ նրանից կազմված՝ երաժշտական բառերը վկայված են ընդամենը երկուական անգամ: Գրաբարում երաժիշտ արմատով կազմված մյուս բառերը՝ երաժշտակ, երաժշտաբար, երաժշտագործել, երաժշտականութիւն, երաժշտանամ, երաժշտապետ, երաժշտացուցանեմ, երաժշտեմ, ավելի ուշ շրջանի են եւ վկայված են հիմնականում հունարենից կատարված թարգմանություններում³:

Եզրահանգում

Փաստորեն, 5-րդ դարի հայ ինքնուրույն գրականության մեջ միայն Եղիշեի երկում է հանդիպում երաժիշտ արմատը (երաժշտական բառում), այն էլ խիստ «մասնագիտական» համատեքստում: Հետագայում աստիճանաբար նրա գործածության դաշտն ընդլայնվում եւ ընդհանրական իմաստ է ձեռք բերում նշանակելով առհասարակ թե՛ «երգիչ», թե՛ «նվագող», այսինքն՝ «գուսան»: Արդեն 6-րդ դարի սկզբին երաժշտական բառը գործածված է Դավիթ Անհաղթի երկում այն հատվածում, ուր բացատրվում է «գործիքային երաժշտություն, նվագարվեստ» երեւույթը⁴:

Այսպիսով, ամփոփելով մեզ հասած սուղ տեղեկությունները եւ հենվելով ներկա բանասիրական-իմաստաբանական վերլուծության վրա, կարող ենք որպես մի վարկած ենթադրել, որ երաժիշտ բառը, երեւույթի հետ միասին, նախ ներթափանցել է Սյունիք, որտեղից էլ հետագայում տարածվելով գրական հայերենում ընդհանուր իմաստ է ձեռք բերել՝ գործածվելով որպես հուն. μουσικός բառի հոմանիշ: Հայ. երաժիշտ բառի իմաստաբանական զարգացման պատմության մեջ ուշագրավ է նաեւ ուշ դարերի գրիչների կողմից Եղիշեի տեքստի խմբագրման երեւույթը, երբ այլեւս իմաստազուրկ հին կապակցությունը փոխարինվել է առավել ընդհանրական համարժեք բնորոշմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ.Խ. 1967, «Հին գուսանական ժողովրդական երգեր». Երկեր, հ. 2 (խմբ. Ա. Դանալանյան), Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967, էջ 9-280:

2. Աճառեան Հ.Յ. 1899, Ստուգաբանութիւններ // Բանասէր. Հանդես հնախօսական, պատմական, լեզուաբանական եւ քննական (տնօրինութեամբ Կ.Յ. Բասմաշեանի), հ. I, գիրք Գ, Պարիս, 1899, էջ 250-252:

1 Աճառեան 1971-1979, 2, 34:

2 Ջահուկյան 1987, 570; Ջահուկյան 2010, 219:

3 Հովհաննիսյան 2007, 101, տե՛ս Աւետիքեան, Սիւրմելեան, Ազգերեան 1836-1837, 1, 666:

4 Հովհաննիսյան 2010, 103:

3. Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ. 1836-1837, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, հ. 1, 1836, հ. 2, 1837:
4. Եղիշէ 1861, Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, ըստ Անձեւացեացն օրինակի, Թեոդոսիա, Խալիպեան տպարան, 1861:
5. Եղիշէ 1946, Եղիշէի Վարդանանց պատմությունը (թարգմանությամբ, Ներածական ուսումնասիրությամբ եւ ծանոթագրություններով պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի), Երեւան, «Հայպետհրատ», 1946:
6. Եղիշէ 1957, Եղիշէի Վանս Վարդանայ եւ Հայոց պատերազմին (ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեանի), Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1957:
7. Եղիշէ 1958, Եղիշէի Վարդանանց պատմությունը (թարգմանությամբ եւ ծանոթագրություններով պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի), Երեւան, «Հայպետհրատ», 1958:
8. Եղիշէ 1989, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին (թարգմանութիւնը եւ ծանոթագրութիւնները Ե. Տեր-Մինասյանի), Երեւան, ԵՊՀ հրատ., 1989:
9. Կիւլեւերեան ծ.Վ. Բաբգէն 1904, Ծովք. ծովք – Տյուրք եւ Հռոմ-կլայ (քարտեսով միասին). պատմական եւ տեղագրական ուսումնասիրութիւն, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1904:
10. Կիւլեւերեան ծ.Վ. Բաբգէն 1909, Եղիշէի քննական ուսումնասիրութիւն, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1909:
11. Կորյուն 1981, Վարք Մաշտոցի (աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի), Երեւան, ԵՊՀ հրատարակչություն, 1981:
12. Հացունի Վ. (Հայր Վարդան Վարդապետ) 1912, Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ, Վենետիկ, Ս. Ղազար, 1912:
13. Հովհաննիսյան Լ.Շ. 2007, Երաժշտություն իմաստային խմբի բառերը գրաբարում // Ջահուկյանական ընթերցումներ-2007 (հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ), ՀՀ ԳԱԱ ԼԻ, Երեւան, «Վան Արյան», 2007, էջ 101-111:
14. Հովհաննիսյան Լ.Շ. 2010, Գրաբարի բառարան - Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երեւան, «Էդիթ պրինտ» 2010:
15. Մատենագիրք հայոց 2003, Ա հատոր, Ե դար, Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2003:
16. Ջահուկյան Գ.Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987:
17. Ջահուկյան Գ.Բ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, «Ասորիկ», 2010:
18. Տեր-Մինասյան Ե. 1943, Եղիշէի «Վարդանանց պատմությունը» եւ նրա նորագույն քննադատը // Տեղեկագիր ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի, № 3, 1943, էջ 63-98:

ВАСАК СЮНИ И «МУЗЫКАЛЬНЫЕ ОБРЯДЫ» СОГЛАСНО ЕЛИШЕ: ЛИНГВИСТИЧЕСКО-КУЛЬТУРОЛОГИЧЕСКИЙ ОЧЕРК - ТОРК ДАЛАЛЯН - Статья касается одного эпизода в деятельности наместника (марзпана) Армении Васака Сюни (5-ый в.) и анализа словосочетания *eražštakan karg-k'* «музыкальные обряды», связанного с этим эпизодом. В современном армянском данное словосочетание воспринимается неоднозначно. Принимая во внимание интерпретацию М. Абеяна, который слово *karg* переводит здесь как «группа» и, следовательно, *eražštakan karg* — как «оркестр», мы попытались рассмотреть «музыкальные обряды» под более

специализированной узкой призмой. Данный подход помогает в какой-то степени осмыслить непонятные вопросы этимологии и семантики слова неизвестного происхождения eražišt «музыкант». Обобщая скудные историографические данные и, опираясь на настоящий филологическо-семантический анализ, можно предположить, что термин eražišt, вместе с феноменом «языческих музыкантов», вначале проник в провинцию Сюник, откуда позднее распространился в литературном армянском, приобретая общий смысл, сходный с греческим словом μουσικός. В истории семантического развития слова eražišt примечателен также факт редактирования текста Елише переписчиками поздних веков, вследствие чего потерявшее смысл устаревшее словосочетание было заменено более общим эквивалентным определением.

Ключевые слова: музыкант, музыкальный порядок, языческая песня, Елише, Васак Сюни, рукописи.

VASAK SIUNY AND «MUSICAL ORDERS» ACCORDING TO ELISHE: CULTURAL-LINGUISTIC SURVEY - TORK DALALYAN - The paper broaches one episode from the activity of Vasak Siuny, governor (marzpan) of Armenia (5th c.), and the analysis of the phrase eražštakan karg-k' «musical orders» associated with this episode. In modern Armenian, this phrase is perceived not unambiguously. Taking into account the interpretation of M. Abeghyan, who translates the word karg here as «group» and hence eražštakan karg as «orchestra», we have tried to consider the «musical orders» through a more specialized narrow prism. This approach helps us to some extent comprehend the complicated questions of the etymology and the semantics of the word eražišt «musician», which is of unknown origin. Summarizing the scanty historiographical data and relying on the given philological and semantic analysis, we can assume that the term eražišt, together with the phenomenon of «pagan musicians», first penetrated the province of Syunik, from where it spread later in literary Armenian, acquiring a general meaning, as a synonym of the Greek word μουσικός. In the history of the semantic development of the word eražišt, it is also noteworthy that the text of Elishe has been edited by the copyists of the later centuries, during this process the meaningless obsolete phrase has been replaced by a more general equivalent one.

Key words: musician, musical order, pagan song, Elishe, Vasak Siuny, manuscripts.